


# Ինչպես բողոքարկել Աշխատանքի և արդյունաբերության բաժնի որոշումը Ձեր հայցի վերաբերյալ



## Ինչ է բողոքարկումը:

Բողոքարկումը նամակ է, որը հայտնում է, որ Դուք համաձայն չեք աշխատողների փոխհատուցման Ձեր հայցի վերաբերյալ որոշման հետ: Ձեր բողոքարկումը պետք է ուղարկվի որոշումը Ձեր կողմից ստանալուց հետո 60 օրվա ընթացքում:

Ձեր բողոքարկումը պետք է ներառի՝

- Ձեր անունն ու հայցի համարը:
- Բաժնի որոշման ամսաթիվը:
- Ձեր անհամաձայնության պատճառը և մատակարարների որևէ գեկույցներ կամ այլ տեղեկությունները, որոնք Դուք կարծում եք, ցույց են տալիս, որ որոշումը սխալ է:

## Որտե՞ղ պետք է ուղարկել իմ բողոքարկումը կամ գանգատարկումը:

- Ուղարկեք բողոքարկումն առցանց՝ օգտվելով Claim and Account Center-ից (Հայտերի և հաշվի կենտրոն) <https://secure.Lni.wa.gov> կայքի միջոցով (այս տարբերակից օգտվելու համար Դուք պետք է հաշիվ և գաղտնաբառ ստեղծեք): ԿԱՍ
- Ուղարկեք գրավոր բողոքարկումն այստեղ՝ Department of Labor & Industries, P.O. Box 44291, Olympia WA 98504-4291: ԿԱՍ
- Գրավոր բողոք ներկայացրեք այստեղ՝ Board of Industrial Insurance Appeals (BIIA), Executive Secretary, P.O. Box 42401, Olympia WA 98504-2401, կամ ուղարկեք Ձեր բողոքարկումն էլեկտրոնային ձևով, որը կարող էք գտնել [www.BIIA.wa.gov](http://www.BIIA.wa.gov) կայքէջում: (Հնարավոր է, որ Labor & Industries [Աշխատանքի և արդյունաբերության բաժինը] չկարողանա պատասխանել Ձեր մտահոգությանը, եթե Արդյունաբերական ապահովագրման բողոքարկման խորհուրդը [Board of Industrial Insurance Appeals, BIIA] նրան չհարկադրի անել դա):

## Ինչ է տեղի ունենում, երբ բաժինը ստանում է իմ բողոքարկումը:

Ձեր հայցի վերահսկիչը կվերանայի Ձեր հայցի ֆայլը և կանի հետևյալից մեկը՝

1. Կփոխի նախնական որոշումը: Դուք կստանաք նոր որոշման մասին նոր նամակ կամ հրաման, կամ երկուսն էլ:
2. Կորոշի, որ նախնական որոշումը ճիշտ է: Դուք հրաման կստանաք, որը հայտնում է, որ որոշումը ճիշտ է: Դուք կարող եք գրավոր բողոք ներկայացնել Արդյունաբերական ապահովագրման բողոքարկման խորհրդին (BIIA) այս նոր հրամանի վերաբերյալ, եթե կրկին համաձայն չեք դրա հետ: Բողոքարկում ներկայացնելու ժամանակահատվածն ու փոստային հասցեն գրված կլինեն այդ հրամանում:

3. Կորոշի, որ լրացուցիչ տեղեկություն է հարկավոր: Դուք կստանաք հրաման, որը ժամանակավորապես կանգնեցնում է որոշումը, և նամակ, որը լրացուցիչ տեղեկություններ է պահանջում, կամ երկուսն էլ: Հայցի վերահսկիչը կարող է Ձեզանից, Ձեր բժշկից կամ Ձեր գործատուից լրացուցիչ տեղեկություններ պահանջել:

Ձեր բողոքարկման մասին որոշումը կարող է կայացվել 30-ից 60 օրվա ընթացքում կամ ավելի երկար կախված այն բանից, թե ինչ լրացուցիչ տեղեկություն է պահանջվում: Եթե Ձեր բողոքն ուղարկելուց հետո 30 օրվա ընթացքում նամակ չեք ստացել, խնդրում ենք դիմել Ձեր հայցի վերահսկիչին:

## Իսկ եթե՞ ես չեմ բողոքարկում կամ բողոք ներկայացնում, կամ անում եմ դա 60 օր անց:

Եթե Դուք չեք բողոքարկում կամ բողոք ներկայացնում 60 օր ժամանակահատվածում, ապա բաժնի որոշումը համարվում է վերջնական: Սա նշանակում է, որ հետագայում Դուք չեք կարող բողոքարկել կամ բողոք ներկայացնել այս որոշման վերաբերյալ:

## Ու՞մ պետք է դիմել, եթե հարցեր կամ մտահոգություններ ունեմ իմ հայցի վերաբերյալ:

- Ձեր հայցին վերաբերվող հատուկ հարցերով դիմեք Ձեր գործով զբաղվող հայցի վերահսկիչին: Ձեր հայցի վերահսկիչը կարող է թարգմանիչ տրամադրել, որը կօգնի հեռախոսագանգի ընթացքում:
- Բաժնի անվճար հեռախոսահամարն է 1-800-547-8367, որը նախատեսված է հայցերի մասին ընդհանուր տեղեկություններ տրամադրելու համար: Այս հեռախոսահամարը տեղեկությունն իսպաներեն լեզվով լսելու տարբերակ է առաջարկվում:

## Լրացուցիչ օգնության համար կարող եք նաև խորհրդակցել հետևյալ անվճար ծառայությունների հետ՝

- Project Help (Օգնության նախագիծ)՝ 1-800-255-9752: Հնարավոր է, որ պետք լինեն թարգմանչական ծառայություններ:
- Կորդինացված իրավական կրթություն, խորհուրդ և ուղեգիր (Coordinated Legal Education, Advice and Referral, CLEAR) 1-888-201-1014: Այս ծառայությունը հեռախոսային խորհրդակցություն և ուղեգրեր է տրամադրում ցածր եկամուտ ունեցող աշխատողներին շաբաթվա աշխատանքային օրերին, սովորաբար առավոտյան ժամը 9:15-ից մինչև ցերեկվա ժամը 12:15-ը: Տեղեկությունը մատչելի է իսպաներեն լեզվով:

Օգնության նախագիծ կամ CLEAR դիմելը բաժնի որոշումը բողոքարկելու կամ բողոք ներկայացնելու մաս չի կազմում: Բաժնի որոշումը բողոքարկելու համար հետևեք այս ամփոփաթեթում նշված քայլերին:

PUBLICATION F242-363-204 (Armenian) [04-2019]



Washington State Department of Labor & Industries  
Workers' Compensation Services

Հաշմանդամություն ունեցող անձանց համար, խնդրանքի դեպքում, մատչելի են այլ ֆորմատներ: Չանգահարեք 1-800-547-8367 հեռախոսահամարով: TDD օգտվողները պետք է զանգահարեն 360-902-5797 հեռախոսահամարով: L&I (Աշխատանքի և արդյունաբերության բաժինը) հավասար հնարավորություններ տրամադրող գործատու է: